

16-օրյակը սկիզբ է առնում մի քանի իրադարձություններից ու տարեթվերից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր խորհուրդը:

Նոյեմբերի 25
Ուլբե՞ր էին
Միրաբալ քույրերը



Այս օրը կապված է Միրաբալ չորս քույրերի հետ, որոնք իրենց ամուսինների հետ պայքարում էին Դոմինիկյան Հանրապետությունում Տրուխիլիոյի բռնապետության դեմ: 1960 թ. նոյեմբերի 25-ին Միրաբալ քույրերից երեքը սպանվեցին բռնապետի գաղտնի ոստիկանության աշխատակիցների կողմից: Խեղդամահ արված կանանց մարմինները գտան գաղթաբեկի հատակում: Դաժան սպանության լուրը ցնցեց բնակչությանը և ուժեղացրեց Տրուխիլիոյի դեմ քաղաքական շարժումը, որը դրանից շատ չանցած սպանվեց, և նրա վարչակարգը վերացվեց:

1999 թ. ՄԱԿ-ը պաշտոնապես հայտարարեց նոյեմբերի 25-ը կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օր:

Դեկտեմբերի 1
ՁԻԱՀ-ի դեմ
պայքարի
միջազգային օր



ՁԻԱՀ-ի դեմ պայքարի խորհրդանշանը կարմիր ծապավենն է՝ շրջված «V», որը կարելի է ցանցի, աջակցության և առանց ՁԻԱՀ-ի ապագայի հույսի խորհրդանշան է:

2006 թ. դրությամբ ՄԻԱՎ վարակակիրների թիվն աշխարհում կազմում է մոտ 39,5 մլն: ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիրների 51%-ը (այսօր 20 միլիոնից ավելի) կանայք են: Ամեն օր տեղի ունեցող վարակվելու 16000 դեպքերից 55%-ում գոյր կինն է: Հայաստանում 1988-2008 թթ. գրանցվել է ՄԻԱՎ վարակի 613 դեպք: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակի փորձագիտական գնահատումը վկայում է, որ հաշվարկային տվյալներով հանրապետությունում կա 2800 ՄԻԱՎ-ով ապրող մարդ:

Դեկտեմբերի 2
Ստրկության
դեմ պայքարի
միջազգային օր



Այս օրը կապված է ՄԱԿ-ի կողմից Սարդկանների և երրորդ անձանց կողմից մարմնավաճառության շահագործման դեմ պայքարի մասին կոնվենցիան ընդունելու հետ: 400 տարի աշխարհի երկրները գրառվում էին ստրուկների առևտրով, և շուրջ երկու դար պահանջվեց, որպեսզի նրանք ընդունեն այդ առևտուրը որպես հանցագործություն մարդկության դեմ: Համեմատաբար վերջերս մարդկությունը բախվեց ստրկության ժամանակակից ձևի՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ: Ըստ որոշ հաշվարկների՝ մարդկանց առևտրից ստացվող անդրազգային հանցավորության եկամուտը կազմում է տարեկան մոտ 10 մլրդ դոլար:

Ժամանակակից ստրուկների մեծ մասը կանայք են: ՄԱԿ-ի գնահատականներով ամեն տարի աշխարհում մարդկանց առևտրի (թրաֆիքինգ) զոհ են դառնում մինչև 4 մլն կին և երեխա (Եվրոպայում՝ մինչև 500 հազ.), ընդ որում, 87% դեպքերում նրանց օգտագործում են սեռական շահագործման համար:

Միևեք և քաղաքականություններ

«Լռությունը պատվաբեր չէ. Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքար» Amnesty International-ի գեկույցը ներկայացվեց նոյեմբերին Երևանում:



Էջ 2

Հատուկ թողարկում, 2008

Ամենամյա անվճար հավելված

Ճեղքել լռությունը



Նոյեմբերի 25
Կանանց
նկատմամբ
բռնության
վերացման
միջազգային օր

Դեկտեմբերի 1
ՁԻԱՀ-ի դեմ
պայքարի
համաշխարհային
օր

Դեկտեմբերի 2
Ստրկության
դեմ պայքարի
միջազգային օր

Դեկտեմբերի 6
Մոնրեալի
կոստորածի օր

Դեկտեմբերի 10
Մարդու
իրավունքների
միջազգային օր

«Ես ամաչում եմ, որ ինչ-որ մեկը կարող էր իմ դեմ ուժ կիրառել, ամաչում եմ դրանից: Ինչպես կարող էի թույլ տալ, որ ինչ-որ մեկն ինձ հետ այդպես վարվեր, սա է ինձ հետապնդելու մինչև կյանքիս վերջը, ինչպես թույլ տվեցի, որ դա պատահի: Բանն այն է, որ ես ընտրություն չունեի»:

Amnesty International-ի գեկույցից

Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ

Ամեն տարի ամբողջ աշխարհում ավելի ու ավելի շատ մարդիկ են իրենց ծայր բարձրացում կանանց նկատմամբ բռնությանը միակամ «Ոչ» ասելու համար՝ մասնակցելով «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավին:

Քարոզարշավն անցկացվում է 1991 թվականից և առ այսօր դրանում մերգրավված է 160 երկրից ավելի քան 2000 կազմակերպություն:

16-օրյակն սկսվում է նոյեմբերի 25-ից՝ Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օրից և տևում մինչև դեկտեմբերի 10-ը՝ Մարդու իրավունքների միջազգային օրը:

Ինչպես հայտնի է, այս տարի նշվում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի

60-ամյակը, և կանանց նկատմամբ բռնության իբրև մարդու իրավունքների խախտման դեմ քարոզարշավը առավել խորհրդանշական է դառնում:

2000 թվականից այս քարոզարշավին մասնակցում են Հարավային Կովկասի երկրները, այդ թվում նաև Հայաստանը: Ավանդույթը շարունակելով՝ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության» ծրագիրը նախաձեռնեց այս տարվա քարոզարշավը՝ մեկ անգամ ևս հնչեցնելու գենդերային բռնության հիմնախնդրի կարևորությունը և ներգրավելու ավելի մեծ թվով մասնակիցների, այդ թվում՝ պետական և քաղաքական կառույցներին, ՁԼՄ-ներին, հասարակության լայն շրջանակներին:

Այս տարվա քարոզարշավում նախատեսված հիմնական միջոցառումները կլինեն.

- Մամուլի ասուլիսներ և/կամ 16-օրյակ քարոզարշավի օրերը լուսաբանող հատուկ միջոցառումներ
- Կլոր-սեղան քննարկումներ (ՀԿ-ներ, ՁԼՄ, կառավարություն)
- Դասընթացներ և տեղեկատվական սեմինարներ գենդերային բռնության վերաբերյալ
- Ֆիլմերի ցուցադրում և քննարկումներ
- Հեռուստա- և ռադիոհաղորդումներ
- Անվճար իրավաբանական, հոգեբանական և բժշկական խորհրդատվություններ ներընտանեկան բռնության զոհերի համար
- Հատուկ միջոցառումներ (ցուցահանդեսներ, դասախոսություններ, շնորհանդեսներ),
- Եզրակապիչ կոնֆերանս և այլն:

Ուշադրություն

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակը հրավիրում է կանանց և մարդու իրավունքների, ներընտանեկան բռնության ոլորտում աշխատող բոլոր շահագրգիռ կազմակերպություններին մասնակցել «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավին: Եթե ցանկանում եք մասնակցել կամ կազմակերպել միջոցառումներ, որոնք առնչվում են քարոզարշավի օրակարգին, եթե ունեք հետաքրքիր գաղափարներ քարոզարշավն ավելի գործուն դարձնելու վերաբերյալ, խնդրում ենք դիմել «Ընդդեմ գենդերային բռնության» ծրագրի համակարգող Ջինա Սարգիզովային՝ 51 20 38 հեռախոսահամարով կամ sargizova@unfpa.org ելփոստով:

«Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագիրը ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կողմից իրականացվող եռամսյա ծրագիր է, որը մեկնարկել է այս տարի Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում, և որի նպատակն է ստեղծել բռնության նվազեցմանը նպաստող միջավայր և օժանդակել այս դաշտում միջազգային պարտականությունների կատարմանը:

Հասցեն՝ ՀԱՀ Երևան 0070
Քիզմես կենտրոն,
Ալեք Մամուկյան 9, 409 սենյակ,

Օրացույց

Դեկտեմբերի 6 Մոնրեալի կտորած

1989 թ. դեկտեմբերի 6-ին 25-ամյա Մարկ Լեպիերը մտնելով Մոնրեալի համալսարանի ինժեներական դպրոցի շենք՝ սկսեց կրակել ուսանողների վրա, որի հետևանքով սպանվեց 14 կին և վիրավորվեց 13-ը: Մարդասպանը վատահ էր, որ կին ուսանողուհիների պատճառով է, որ ինքը չէր ընդունվել այդ դպրոց: Այս իրադարձությունը սկիզբ դրեց «Սպիտակ ժապավեն» շարժմանը, որը նախաձեռնել էին կանադացի տղամարդիկ: Ժամանակի ընթացքում այն դարձավ միջազգային և խորհրդանշուն է տղամարդկանց ու կանանց միասնությունը ընտանեկան բռնության դեմ պայքարում: Կանադայում նաև հռչակվեց «գործական հանդուրժողականության» գաղափարը բռնության նկատմամբ:


Դեկտեմբերի 10 Մարդու իրավունքների միջազգային օր



1948 թ. այս օրը ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը ընդունեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը: Այս տարի նշվող 30-ամյակի 60-ամյակի կարգախոսն է «Արժանապատվություն և արդարություն բոլորին»:

«Համատեղ ուժերով վերջ դնենք կանանց նկատմամբ բռնությանը»

Այսպես է կոչվում քարոզարշավը, որը հայտարարվեց 2008 փետրվարի 25-ին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մու-նի առաջարկով: Քարոզարշավը կունի 2008-2015 թթ.: «Ոչ մի երկիր, ոչ մի մշակույթ, ոչ մի կին երիտասարդ թե տարեց, պաշտպանված չեն այս աղետից»,- ասաց նա առաջարկելով աշխարհի բոլոր երկրներին միանալ քարոզարշավին:



Հայացք դրսից

Amnesty International. Բռնության հետ ապրելը. Հայաստանի կանանց փորձը

Նոյեմբերի 13-ին երևանում տեղի ունեցավ «Լուռությունը պատվաբեր չէ. Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքար» Amnesty International համաշխարհային իրավապաշտպան շարժման պատրաստած զեկույցի շնորհանդեսը: Նրանում ներկայացված են վերջին երկու տարվա ընթացքում Հայաստանում ընտանեկան բռնության մասին տվյալներ: Խնդրի ուսումնասիրություններն անցկացվել են Գյումրի և Մարտունի քաղաքներում, ինչպես նաև Երևանում: Փորձագետների կարծիքով Հայաստանում գերիշխում է կանանց նկատմամբ բռնությունը ընդունող և նույնիսկ արդարացունող հասարակական վերաբերմունք, որը չի սահմանափակվում տղամարդկանցով, այլ լայն տարածում ունի նաև կանանց շրջանում: Amnesty International-ը ընդունում է, որ սերտ ընտանեկան կապերը հայ մշակույթի անբաժանելի և նվիրական բաղկացուցիչն են, սակայն անհանգստացած են, որ հասարակության կողմից ընտանիքի պաշտպանության հետևում բարձրում է արմատավորված սովորույթը լռության մատնել ընտանիքում բռնության դեպքերը և դրանց գործիքն արդարադատությունից զրկել:

«Ես իմ խաչն է, ու ես պարտավոր եմ այն կրել...»: ղժվար է ասել, թե որքան հայ կին է կինում հաշտվողական այս կարծիքը և հերոսաբար համակերպվում ամուսնու ճնշումներին, սակայն Հայաստանի մայրության կենտրոնի շրջանակներում գործող «Հույս» ճգնաժամային ընտանեկան կենտրոնում համարում են, որ դրանք ավելի են քչանում: Ցավոք, ոչ այն պատճառով, որ ընտանեկան բռնությունը դարարում է Հայաստանի համար խնդիր լինելուց: Պարզապես ավելի շատ կանայք չեն համակերպվում դրան: Համեմայն դեպ, նրանց բոլորին պետք է օգնել: Ու այնպես, որ ընտանիքը պահպանվի: Սա է «Հույսի» գլխավոր սկզբունքը: «Մենք ջանում ենք առավելագույնը հարմարեցնել մեր աշխատանքը տեղական պայմաններին», - ասում է Հայաստանի մայրության կենտրոնի նախագահ Սուսաննա ԱՆԼԼՆՅԱՆԸ: Այս կազմակերպության հոգեբանները, իրավաբանները, սոցիալական աշխատողները օգնում են դժբախտության մեջ հայտնված հայ կանանց և... նրանց ամուսիններին: Ու դրանով իսկ փորձում դուրս բերել ընտանիքը ճգնաժամային իրավիճակից:

Վերջին չորս տարվա ընթացքում օգնության համար «Հույսին» դիմած 1321 կանանցից չի հաջողվել պահպանել միայն 5 ընտանիք: Ինչ արած, երբեմն ստիպված են բախվել բավական բարձրորդի դեպքերի հետ: Օրինակ՝ երբ ամուսինը կազմում էր ընտանիքի բյուջեն նախօրոք այն համակարգչում արձանագրելով: Առանձին տողով նշվում էր, թե իր բերած փողից կինը որքան պետք է ծախսի հացի համար, ասենք՝ 200 դրամ: Ու եթե փորձում էր ավելի շատ ծախսել, ամեն ինչ ավարտվում էր սարսափելի վեճով: Նույնիսկ կնոջ վատասկած գուժարից նրան ոչինչ չէր տրվում, քանի որ կնոջ աշխատավարձը ամուսինն ինքն էր ստանում: Նման ամուսնուց «փախչելու» խեղճ կնոջ ցանկությունը կենտրոնի աշխատակիցները միանգամայն արդարացի համարեցին: Միայն թե, ավաղ, ուր:

Ավելի քան երկու տարի ճգնաժամային կենտրոնի շրջանակներում միջազգային հիմնադրամների աջակցությամբ գործում էր ընտանեկան բռնության գոհերի համար ապաստարան: Հասարակության բացասական ռեակցիան չեզոքացնելու համար ընտրել էին մի չեզոք անվանում՝ «Մոր և մանկան տուն»: Ու պատճառը միայն այն չէ, որ օտարահունչ «shelter» բառը շատերին անկեղծորեն գայրացնում է: Ընտանիքում բռնությունը հասարակության համար փաստորեն փակ թեմա է, ընդունված չեն ընտանեկան խն-

Ինչպես պաշտպանել ընտանիքը բռնությունից



դիրները քննարկման դնել: Սակայն որոշակի տեղաշարժ հասարակական ընկալումների մեջ, Սուսաննա Ասլանյանի կարծիքով, այնուամենայնիվ կա: «Վերջին տարիներին խնդրի սկսեց ուշադրություն դարձնել պետությունը, ու աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ մենք մշակեցինք «ճգնաժամային իրավիճակում հ ա յ տ մ վ ա ծ ամուսնու օգնության ծրագիր»:

Հայաստանի մայրության կենտրոնի թեժ գիծ՝ 28 35 75

Հիմա աշխատում ենք հայեցակարգի վրա, որը կտա ընտանեկան բռնության գոհերին համակողմանի օգնության մեխանիզմները և իրավական հիմքերը: Նա հուսով է, որ պետությունը, ի վերջո, կմասնակցի նաև բռնությունից տուժածների համար վերականգնողական կենտրոնների աջակցության գործին և այլևս հարկ չի լինի դրանք պահելու միջոցներ փնտրել արտասահմանյան դոմորներին:

Բառացիորեն օրերս օգնության համար «Հույս» էր դիմել երկու երեխաների մայր, որին ամուսինը տնից դուրս էր հանել: Կինը հիվանդ է և ի վիճակի չէ ոչ միայն բնակարան վարձելու, այլև իրեն ու երկու որդիներին՝ 15 ու 16 տարեկան, կենսական նվազագույն ապահովելու: Մայրն ու երեխաները ժամանակավորապես տեղավորվել են տատի տանը, որտեղ առանց այն էլ նեղվածք է: Երբեմն տղաները տեղ չլինելու պատճառով քնում են բազմաթոռներին: Ու տանջվում մանկության ծանր հիշողություններից: Կայրը վերաբերվում էր երեխաներին օտարի պես և մոր հետ գրեթե հավասար ծեծում էր: Տղաներից մեկին փոքր

ժամանակ առավոտյան կապել էր աթոռին: Ու երեխան որպես «պատանդ» էր մնացել մինչև երեկ, երբ մայրն աշխատանքից տուն էր եկել: Ճգնաժամային կենտրոնը այցելելուց ամուսինը կտրականապես հրաժարվեց: Սակայն տանը նրան այցելած կազմակերպության աշխատակիցները վստահեցնում են, որ նա ընդհանուր առմամբ աղեկվատ է: Նա ավելի շատ չկայացած մարդ է, քան խենթ:

Այցելուներից մեկը յոթ ամսվա հղի էր: Ու միանգամից չէր իմացել կնոջ վիճակի մասին, համառել էր և պնդել... աբորտ անել: Պատճառը երեխային պահելու միջոցների բացակայություն: Հոգեբանի հետ զրույցից հետո իր կարծիքը փոխեց, և այս գույքը երեխային, այնուամենայնիվ, պահեց: Սակայն միայն իրեն ու Աստծուն է հայտնի, թե ի՞նչ արժեքավ կնոջ համար երեխայից ազատվելու ամուսնու բավական երկար և համառ պահանջը, այն էլ՝ այս ժամկետում:

Հոգեբանական բռնության մեծ ղեկավարը ամենաշատն է: Ընտանեկան բռնության այս տարատեսակը

«Ըստ Amnesty International-ի գնահատականների՝ ընտանեկան բռնության գոհերին ցուցաբերվող օժանդակությունը Հայաստանում հեռու է բավարար լինելուց. «2002 թվականից ի վեր ստեղծվել էին մի շարք սոցիալական կենտրոններ, որտեղ ճգնաժամային իրավիճակում հայտնված կանայք կարող էին պատասխարկվել: Դրանց մեծ մասը բազմել էր հասարակական կազմակերպությունների ջանքերով և գուրկ էր ֆինանսավորման հաստատուն աղբյուրից: Դա է պատճառը, որ ֆինանսական միջոցների պակասը հասարակական այդ կազմակերպություններին, ի վերջո, ստիպեց դադարեցնել կամ սահմանափակել սոցիալական կենտրոնների մեծ մասի գործունեությունը»,- նշում են փորձագետները:

Ջրուցեց Ասյա Ծատուրկյան

Շով համբերություն

Ինձ խորհուրդ տվեք...

Մեզ միշտ խորհուրդ է պետք՝ թե ինչպես վարվել այս կամ այն իրավիճակում: Հարազատների կամ լավագույն ընկերուհու կյանքի իմաստությունը լավ են կենցաղային մակարդակում: Իսկ ո՞ւմ հետ խորհրդակցել, եթե խոսքը կանանց իրավունքների ամենաբար ռոտահարումների, անձի նկատմամբ բռնության մասին է:

Դեռատի Մերին ամուսնացավ դպրոցն ավարտելուց անմիջապես հետո: Պապը և հորեղբոր ընտանիքը, որտեղ նա դաստիարակվում էր մորը ծնողական իրավունքների գրկելու և հեռավոր խոսակցում հոր կողմից հետո, ցանկանում էին նրա կյանքը դասավորել լավ ձեռքերի համծնելով: Իսկ այստեղ՝ աշխատող 30-ամյա երիտասարդ, երկսեռյականոց բնակարան Երևանում, սկեսուր և սկեսրայր: Մերին չէր ցանկանում ամուսնանալ, ամուսինը չափից ավելի մեծ էր թվում, սակայն կողքին ոչ ոք չէր աջակցում, և նա ստիպված համակերպվեց:

Առաջին նախազուլական գանգը ինչեց, երբ նրան խորհուրդ տվեցին ավելի քիչ չփվել հարևանների հետ: Սկեսրոջ փաստարկները բավական ծանրակշիռ էին. սա թեթևամիտ է, սրա մայրը ման եկող է, իսկ այս ընտանիքում երիտասարդ տղամարդիկ կան: Մարին սկզբում այնքան էլ դարձ չէր անում, նա տնով մեկ դեռ ու դեռ էր գնում, հաճույքով կատարում ողջ աշխատանքը իրեն փոքրիկ տանտիրուհի գզարով:

Շուտով հղիացավ: Այս երջանիկ իրադարձությունը մշայվեց նրանով, որ ամուսնությունը դրանցելու ցանկությունը սարսափելի պատասխան ստացավ. «Ամուսնությունն ինչի ձևակեր-

պենք, դու կծնողաբերես, կձևակերպվես որպես միայնակ մայր և կսկսես նպաստ ստանալ, դա կլինի քո ներդրումը մեր բյուջեում, առավել ևս, որ դու մեզ մոտ գրանցված չես»,- բացատրեց սկեսրայրը: Ամուսինը պաշտպանեց հորը: Իսկ հորաքույրը հայտարարեց, որ դա սովորական բան է, ու նա շատերին գիտի, ովքեր այդպես են վարվում:

Ցավոք, նա իրավացի է: Հայաստանում այսօր գրանցված է 11700 միայնակ մայր, և նրանցից 3563-ը միայն Երևանում են, իսկ Լոռիում՝ 1379, Գեղարքունիքում՝ 877 և այլն: Սոցիալական աշխատողների խոսքերով՝ նրանցից նվազագույնը 50%-ն ըստ էության այդպիսին չէ:

Մերին ունեցավ երկրորդ դստերիկը՝ կանոնավորապես ընտանիքին բերելով ոչ մեծ, բայց կայուն փող: Ավաղ, այդ փողերը, ինչպես նաև ուրիշ փող նա չէր տեսնում: Կենցաղային փոքրիկ գնումների համար ստիպված էր ամեն անգամ աղաչել: Նա սկսեց երեխաների հետ բակ դուրս գալ, գրոսնել, տանն սկսվեցին վեճեր: Հոգեբանական բռնությունն աստիճանաբար սկսեց զուգակցվել ֆիզիկականին հետ: Առաջին անգամ ամուսինը խփեց, երբ մայրը հասցրեց, որ Մերին ընկերացել է հարևան խանութի վաճառողուհիների հետ...

Ապրել ընտանիքում ծառայի կարգավիճակով, առանց որևէ միջոցների և առանց ապագայի նա այլևս անկարող էր... Ի վերջո, տնից հեռացավ: Ապրում է միայնակ մոր նպաստով: Երեխաներին ջրույտարեցին իր հետ վերցնել՝ մտածելով, որ վաղ թե ուշ կհաշտվի ու հետ կգա: Մերին դեսուզեց էր ընկել աշխատանք գտնելու: Իսկ ամուսինն այդ ընթացքում դատարան էր դիմել կանխելով բնակ-

տարածք և այլմենտ պահանջելու նրա ցանկությունը: Դատավորների աջքում Մերին կկու մայրիկ էր, որ խաբել էր պետությունն ու լքել իր երեխաներին:

Մայրական իրավունքներից զրկվելուց հետո հուսալքված Մերին մի քանի օր կանգնում էր մանկապարտեզի մոտ՝ փորձելով տեսնել երեխաներին: Իսկ հետո մորից ամենտացավ... Մեկնել է Դուբայ՝ «ազգականուհու» մոտ՝ բացատրեց հորաքույրը:

Սոցիալական ծառայության աշխատողը, որի հետ մենք քննարկում էինք այս դեպքը, ցավով ասաց, որ ինքը զգացել է, որ աղքատ հետ ինչ-որ բան այն չէ: Սակայն նա լռում էր: Իսկ Հայաստանում վտանգավոր է երիտասարդ կնոջ հետ գրուցել չզրանցված ամուսնության վտանգները և ընտանեկան բռնության մասին: Իսկույն գտնվում են սրբազան ավանդույթների պահպանները, ովքեր պատրաստ են մեղադրել թե՛ զ ընտանիքը քայքայելու համար:

Մերիի պարագայում էլ ոչ ոք չհամարձակվեց միջամտել... Քանի-քանի մերիների կյանք պետք է կտրել՝ հասկանալու համար, որ Հայաստանին անհրաժեշտ է սոցիալական աշխատողի ինստիտուտ, որն օրենսդրորեն պետության կողմից լիազորված լինի օգնելու, խորհրդատվություն տալու ծանր իրավիճակներում: Այդ դեպքում սոցիալական աշխատողի հարցերը չեն դիտվի որպես լոկ հետաքրքրասիրության բավարարում, այլ որպես ծառայողական պարտականություն, որը կոչված է պաշտպանելու կնոջ իրավունքները:

Ամենա Հովանանիսյան SPSS/USAID-ի խորհրդատու

Փորձագետի անկյուն

Բռնությունը ոչ թե ընդհանրապես, այլ օրենքի գործն է

Կանանց իրավունքների կենտրոնի ղեկավար Սուսաննա ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ընտանեկան բռնության խնդիրն ծանոթ է ոչ միայն լսելով...

վում է վստահության հեռախոսների և ընտանեկան բռնությունից տուժած կանանց օգնության այլ ծառայությունների (ապաստարաններ, վերականգնողական և ճգնաժամային կենտրոններ) կազմակերպումը...

Օրինագիծը, որ մենք նախաձեռնել ենք և նշակում ենք շահագրգիռ նախարարությունների (սոցիալական հարցերի, առողջապահության, արդարադատության), ոստիկանության, իրենց գործունեության ոլորտով ընտանեկան բռնության խնդիրներին առնչվող ծառայությունների ներկայացուցիչների հետ, կանխարգելիչ բնույթ ունի...

Կանանց իրավունքների կենտրոնի քեթ գիծ՝ 54 28 28

նավել խիստ պատժամիջոցները նախատեսվում են Քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով:

Օրենքն իր գործը կանի, բայց որպեսզի հասարակության մեջ ընտանեկան բռնության նկատմամբ բացասական վերաբերմունք ձևավորվի, միայն օրենքը քիչ է, անհրաժեշտ է հասարակության գիտակցու-

թյանը հասցնել, որ կնոջ նկատմամբ ընտանեկան բռնությունը ոչ թե «մասնավոր գործ» է, այլ մարդու իրավունքների խախտում, որին չկա և չի կարող արդարացում լինել: Մի քանի տարի առաջ մենք լույս ընծայեցինք մի գիրք, որում հավաքել էինք հենց կանանց պատժած իրական դեպքերը, ու եթե ես չաշխատեի այս ոլորտում, ապա երբեք չէի հավատա, որ բռնության մասնադաղակող ձևեր կարող են տեղ ունենալ մեր ժողովրդի մեջ, որն ընտանիքը հռչակել է որպես իր ամենամեծ արժեքներից մեկը:

- Այսօր մշակված ո՞ր փուլում է գտնվում օրենքի նախագիծը:

- Այն արդեն պատրաստ է, շարունակվում է առանձին դրույթների, կետերի մշակումը, շտկումներ են կատարվում: Նոյեմբերի 27-ին մենք պատրաստվում ենք ընդլայնված լսումներ անցկացնել, որոնց կմասնակցեն տարբեր հասարակական կազմակերպությունների, այդ թվում նաև միջազգային, ներկայացուցիչներ, պետական պաշտոնյաներ, պատգամավորներ: Տարեվերջին նախատեսում ենք նախագիծը ներկայացնել խորհրդարանի քննարկմանը:

Զրուցեց Նորա Կանանովան

«Սու 2007թ. «Թուրքմենստան» հասարակական հետազոտությունների կենտրոնի և Կանանց իրավունքների կենտրոնի համատեղ անցկացրած սոցիոլոգիական հարցման, որին մասնակցել է 1006 կին հանրապետության բոլոր մարզերից:

■ Հարցմանը մասնակցած կանանց մեկ երրորդը խոստովանում է, որ մտնում կողմից ենթարկվում է ծեծի. դրանցից 27%-ը՝ թեթև ֆիզիկական բռնության, 12%-ը՝ ծանր: Հոգեբանական բռնության է ենթարկվում հարցվածների մեծ մասը՝ 66%-ը:

■ Հարցվածների 50%-ը հայտնել է, որ արդարացում է ֆիզիկական ուժի գործադրումը կանանց նկատմամբ երեխաներին անտեսելու դեպքում, 40%-ը՝ ամուսնուն չենթարկվելու դեպքում, 30%-ը՝ առանց ամուսնուն տեղյակ պահելու ինչ-որ տեղ գնալու դեպքում, և 30%-ը՝ ամուսնու հետ վիճելու դեպքում: Դրա հետ մեկտեղ հարցման գրեթե բոլոր մասնակիցները համաձայնել են, որ «ամուսինը երբեք չպետք է խփի իր կնոջը»:

■ Հարցվածների մոտ 60%-ը համաձայնել է, որ «ընտանեկան բռնությունը տարածված խնդիր է Հայաստանում»: Հարցվածների գրեթե կեսը ճանաչում է միջին հաշվով, ընտանեկան բռնության ենթարկված չորս կնոջ:

■ Բռնության ենթարկված հարցվածների 29%-ն է միայն բռնությանը վերջ տալու նպատակով դիմել որևէ մեկի օգնությանը, և այդ օգնության համար մեծ մասամբ դիմել է ընտանիքի անդամներին: Ընտանեկան բռնության հետևանքով ստացած վնասվածքների պատճառով տասը հարցվածներից մոտ մեկը դիմել է բժշկական օգնության: Հարցվածների 6%-ը դիմել է ոստիկանության: Ոստիկանության միջամտության տասը դեպքերից մոտ ութի ժամանակ բռնարարը թուղթ է ստորագրել, որ բռնությունը չի կրկնվի, որից հետո ազատ է արձակվել:

■ Հարցվածների մոտ 72%-ը նշել է, որ «Հայաստանում ընտանեկան բռնության մասին օրենքի կարիք ունի»:

Ճնշող փաստաշար

■ Աշխարհում նվազագույնը յուրաքանչյուր երրորդ կին (այսինքն՝ 1 մլրդ ոչ պակաս կանայք) կյանքում թեկուզ մեկ անգամ ենթարկվում է ծեծի, բռնի սեռական հարաբերության կամ ճնշման այլ ձևի: Որպես կանոն վիրավորողը կնոջ հարազատներից կամ ծանոթներից մեկն է:

■ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ամսագրում հարցման տվյալներով աշխարհում բռնությունից տուժած կանանց 20-70%-ը երբեք և ոչ մեկին չի խոստովանել այդ մասին:

■ Կանանց մինչև 47%-ը նշում է, որ իրենց առաջին սեքսուալ փորձը կամավոր չի եղել:

■ Բռնի մահով զոհված կանանց մինչև 70%-ը սպանվել է իրենց ամուսինների կամ կենակիցների կողմից:

■ 1994 թ. Ռուսոնոյայում կատարված եղեռնի ընթացքում սեռական բռնության է ենթարկվել 250-500 հազ. կին: Բոսնիայում 1990-ականների սկզբին հակամարտության ընթացքում բռնության ենթարկված կանանց թիվը կազմել է 20-50 հազ.:

Սոմալիի դատարանը դատապարտեց 13-ամյա աղջկան քարկոծման

13-ամյա աղջիկը իսլամական դատարանի կողմից դատապարտվել էր քարկոծման և հոկտեմբերի 27-ին Կիսմայոյի իրապարակում քարերով սպանեցին:

Դատապարտված Այա Դուխուլուվային իր հարազատ Կիսմայո քաղաքից Մոգադիշո ճանապարհին (որտեղ նա մեկնում էր իր ազգականների մոտ) բռնաբարել էր երեք տղամարդ: Նա դիմել էր իշխանություններին պաշտպանության և օգնության համար, սակայն իսլամական դատարանը նրան մեղավոր ճանաչեց, որ նա մտել էր արտասանական սեռական հարաբերությունների մեջ:

Տղամարդիկ մույնպես տուժում են

2008-ի փետրվարին Հիվանդությունների վերահսկողության և կանխարգելման պետական կենտրոնները (ԱՄՆ) իրապարակեցին մի զեկույց, ըստ որի՝ ԱՄՆ-ում ընտանեկան բռնությունից տառապում է 23,6% կին ու 11,5% տղամարդ: Նրանք բոլորը կյանքում թեկուզ մեկ անգամ ենթարկվել են բռնության ինչպես գուզընկերոջ կողմից:

Դրա հետ մեկտեղ՝ վիճակագրական տվյալներով ամեն տարի ԱՄՆ-ում մոտ 1200 կին է զոհվում, իսկ շուրջ 2 միլիոնը ստանում է վնասվածքներ գուզընկերոջ բռնի գործողությունների հետևանքով:

Բռնությունը թանկ է մատում

Ընտանեկան բռնության հետազոտությունների ամերիկյան ինստիտուտը հաշվել է, որ բռնություն ամեն տարի ԱՄՆ-ին տալիս է 5,8 մլրդ դոլարի վնաս: Այս կորուստները լինում են զոհերի արտադրողականության նվազման, անաշխատունակության և այլ պատճառներով: Կանադայում այս ծախսերը կազմում են 1 մլրդ կանադական դոլար, Մեծ Բրիտանիայում՝ 23 մլրդ ֆունտ ստեռլինգ տարեկան:

14 հազար կին զոհվում է ամեն տարի

UNFPA-ի հետազոտության տվյալներով՝ Ռուսաստանում կանանց 90%-ից ավելին ամեն օր տառապում է ընտանեկան բռնության տարբեր ձևերից: Վիճակագրությունը վկայում է, որ ավելի քան 14 հազ. կին ամեն տարի զոհվում է ընտանեկան բռնության հետևանքով: Փաստորեն՝ յուրաքանչյուր կես ժամը մեկ նրանցից մեկը զոհվում է իր գուզընկերոջ ձեռքով:

Ամուսնացած Ամերիկայի հե՞տ

Ամերիկացի ամուսինների կողմից Ռուսաստանից և Ասիայից բերված հարսնացուների սպանության երկու դեպք, ինչպես նաև օտար կանանց ծեծի, սպանության և նվաստացման բազմաթիվ դեպքեր հիմք դարձան նոր օրենքի ընդունմանը:

Այժմ օտար կնոջ հետ ամուսնանալ ցանկացող ամերիկացի ամուսիններից պահանջվում է ներկայացնել լրացուցիչ տեղեկանք նախկինում քրեական պատասխանատվության, այդ թվում նաև «բռնություն ընտանիքում» հոդվածով, ենթարկված չլինելու մասին:

ԱՄՆ-ում գոյություն ունի օրենք, որի համաձայն՝ բոլոր հյուպատոսություններում Ամերիկայի մուտքի վիզա ստանալիս հարսնացուներին նրանց մայրենի լեզվով տրամադրվում է գրքույկ, որոնցում պատմվում է հնարավոր ընտանեկան բռնության մասին և նկարագրվում է իրավիճակից դուրս գալու եղանակները: Սակայն հարսնացուների շատերը մատերի արանքով են մայում նախագուշացումներին:

Փորձի փոխանակում

Համայնքի ոստիկանական զօով փորձագետներ Նիլ Ֆլեթչերն ու Թիմ Կուկուլան արդեն 6 ամիս բնակվում են Երևանում: «Ոստիկանության աջակցության ծրագրի» շրջանակներում նրանք Լորաբկի համայնքի ոստիկանների հետ անցկացնում են հատուկ դասընթացներ: ԵՄԿԿ երևանյան գրասենյակն արդեն երկու տարի է, ինչ իրականացնում է այս ծրագիրը՝ կիրառելով անգլիական և ամերիկյան ոստիկանների բազմամյա փորձը: Ծրագրի նպատակը համայնքի կյանքում ոստիկանների դերի բարձրացումն է:

Ծրագրի գլխավոր կետերից է նաև ընտանեկան բռնության վերաբերյալ ահազանգերի ընդունումը:

«Հայաստանում դեռևս գոյություն չունի այն մակարդակը, թե համայնքային ոստիկաններն ինչպես պետք է արձագանքեն բռնությանը: Ցավոք, այդ մշակույթը ձեր երկրում չի ձևավորվել», - ասում է Նիլ Ֆլեթչերը: Նա վստահեցրեց, որ բռնության կանխումը ընտանիքում հնարավոր է դառնում հենց ոստիկանների մասնակցությամբ, և պարզաբանում, թե ինչպես պետք է վարվի ոստիկանը մասնակցությունը:

«Անհրաժեշտ է ոչ միայն փաստն արձանագրել, այլև հետաձուլում լինել ծավալվող գործողություններին, օժանդակել զոհին: ԱՄՆ-ում համայնքային ոստիկաններն ավելի նախաձեռնող են: Ավելի խորքային են վերլուծում խնդիրը, հայտնաբերում հանգամանքները: Մինչ փաստացի բռնությունը նրանք կոնկրետ քայլերի են դիմում՝ նպատակ ունենալով կանխել սպասվելիք նպատակը: «Ոստիկանության աջակցության» ծրագրի շրջանակներում հենց այս փորձն ենք կիրառում, հայ ոստիկաններին խրախուսում, որպեսզի ավելի նախաձեռնող լինեն, մարդկանց հետ շփումների արդյունքում տեղեկանան իրենց պրոբլեմների մասին»:

Ամերիկացի փորձագետները սովորեցնում են մեր ոստիկաններին ահազանգել բռնության դեպքերին



մունք: Սակայն դա խնդիր լուծում չէր, որովհետև որոշ ժամանակ անց ամուսինը կրկին բռնություն էր կիրառում: Այժմ օրենքները փոխվել են: Ցանկացած վնասվածքների պատճառով տասը հարցվածներից մոտ մեկը դիմել է բժշկական օգնության: Հարցվածների 6%-ը դիմել է ոստիկանության: Ոստիկանության միջամտության տասը դեպքերից մոտ ութի ժամանակ բռնարարը թուղթ է ստորագրել, որ բռնությունը չի կրկնվի, որից հետո ազատ է արձակվել:

Թիմ Կուկուլան իր հերթին անդրադառնալով այս խնդրին պատմեց. «Անգլիայում և ԱՄՆ-ում խստորեն են արձագանքում ընտանեկան բռնությանը: Կար ժամանակ, երբ բռնություն կիրառած տղամարդու ձեռքակալում էինք, անհրաժեշտ գործողություններ ձեռնարկում՝ դատական գործ հարուցելու համար: Բայց մի քանի օր անց ամուսինները գալիս էին ոստիկանության ստորաբաժանում, և կինը հետ էր վերցնում դի-

մունք: Սակայն դա խնդիր լուծում չէր, որովհետև որոշ ժամանակ անց ամուսինը կրկին բռնություն էր կիրառում: Այժմ օրենքները փոխվել են: Ցանկացած վնասվածքների պատճառով տասը հարցվածներից մոտ մեկը դիմել է բժշկական օգնության: Հարցվածների 6%-ը դիմել է ոստիկանության: Ոստիկանության միջամտության տասը դեպքերից մոտ ութի ժամանակ բռնարարը թուղթ է ստորագրել, որ բռնությունը չի կրկնվի, որից հետո ազատ է արձակվել:

Փորձագետները պատմեցին, որ ԱՄՆ-ում կան օժանդակող ծրագրեր, որոնց շրջանակներում անհրաժեշտ օգնություն են ստանում և զոհը, և հանցագործը:

«Հայուհիները հազվադեպ են արձագանքում բռնությանը: Դա, թերևս, պայմանավորված է ավանդական-ազգային մեղքալիտետով և իրազեկվածության բացակայությամբ: Սակայն նրանք պետք է գիտակցեն, որ լուրջությունը պատվաբեր չէ», - նշում է Կուկուլան:

Հասարակության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով փորձագետները երկու անգամ կազմակերպել են բաց դռների օրեր: Նրանք պարբերաբար այցելում են դպրոցներ, խնամքներ, շփում մարդկանց հետ: Խոսելով հետագա անելիքների մասին՝ ԵՄԿԿ երևանյան գրասենյակի ռազմաքաղաքական հարցերի ազգային պատասխանատու Սուսաննա Նալբախյանը նշեց, որ շուտով համաձայնագիր կվճարվի ԵՄԿԿ-ի և ոստիկանության միջև: Արաբկիր համայնքի փորձն տարածելու նպատակով:

Հասմիկ Հարությունյան

